

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

«Արարատ»ի ապրիլի համարում մենք ասել էինք (էջ 329) որ պէտք է նպաստել ամենամեծ չափով գիւղացի-սեսուքեան զարգացման, այլ և անհրաժեշտաբար հիմնել Հայկական իւրօր գրամատնոն: Վերջին ժամանակներս, ինչպէս երևում է պարբերական թերթերից, եռանդուն գործունէութիւն ենք տեսնում Մոսկուայի, Թիֆլիսի և Բագուի հայերի մէջ իրականացնելու Դրամատան կարևոր ինչիբը Տաճկահայաստանում: Այդ առթիւ Թիֆլիս էին եկել Մոսկուայից մեր անուանի անտեսագէտ պ. Տօտոմեանցը և պրօֆեսոր պ. Զիվիլիկեանը: Նաև ուրախութեամբ կարդում ենք «Մշակ» թերթի 99-րդ համարում, որ պ. Մատթէոս Խերեան ուստահպատակ, և Նալիգտոսի Ալէքսանդրիա քաղաքում ծխախոտի վաճառականութեամբ զբաղուող մի յարգելի պարոն 100,000 ռուբլի է նուիրում, որ այդ գումարով Կիլիկիոյ մէջ մի յարմարաւոր տեղ հիմնուի մի երկրագործական վարժարան: Անշուշտ այդ վարժարանն իւր ժամանակին մեծ զարկ կըտայ գիւղատնտեսութեան զարգացման, և յարգելի Մ. Խերեանի նուիրատուութիւնն աւելի քան ժամանակին է և նպատակը արժանի մեծ քաջալերութեան: Նոյն յարգելի Մ. Խերեանը լաւ գիտակցելով Դրամատան կարևորութիւնը ներկայումս Հայաստանում՝ մի խոնարհ նամակով գիմել է Ազգիս Վեհափառ Հայրապետին և յայտնել հետևեալը. «Տ. Օլգէնին «Ռուսկոյէ Սլովօ» թերթին մէջ՝ «Անհետացող Հայաստանը» վերնագրով ուշագրաւ իր յօդուածաշարքին չորրորդովը որոշ կերպով կը մատնանշէ Տաճկաստանի մէջ Հայոց պատկանեալ հողերու մէկ կարևոր մասին Օսմանեան երկրագործական պանքայի կողմէն գրաւումը, և մնացածին 60—92⁰/₁₀ ալ գրաւի տակ գտնուելով՝ կորսուելու վտանգին ենթակայ ըլլալը: Այս իրողութեան իբրև հետևանք որոշ թիւերով ցոյց կուտայ հայ արտագաղթին վրդովիչ աճումը և Հայոց տեղերը իսլամ գաղթականներու գետեղումը: Նոյն տողերու մէջ, վիճակագրական որոշ թիւերու վրայ յենլով, ցոյց կու-

տայ թէ միայն Սերաստիոյ նահանգին Հայոց պարտքին գումարը կը հասնի կէս միլիոն ուսուլի:

Տ. Օլգենին արդարանալի թերահաւատութեամբ մը կազդարարէ Հայոց՝ որ եթէ բարենորոգումներ իրագործուին իսկ ատոնք բաւական չեն Հայոց գոյութիւնը պահպանելու և փրկութեան միակ պայման կը զտնէ Հայկ. երկրագործական պանի մը հաստատումը:

Տ. Օլգենին թէև միայն զբաւի տակ եղած հոգերը ազատելու մասին կը խօսի, բայց անհրաժեշտ է որ համեստ պայմաններով՝ հողագուրկ հայերուն ալ հոգեր ունենալու դիւրութիւն ընծայուի: Միևնոյն ատեն յիշեալ Ազգ. երկրագործական պանքան թրքական ոտնձգութիւններէ ազատ պահելու համար լաւագոյն է ռուսական հիմնարկութիւն մը ընել, զայն ի հարկին ուս կառավարութեան պաշտպանութիւնը վայելել կարենալու համար: Այս նպատակին համար ներս կառնուին մի քանի ռուսահայ զբամաւէրեր և կեդրոնի, ինչպէս նաև գաւառներու անօրէններ կրնարուին ռուսահպատակ անձնագրութիւններէ:

Պահանջուած անձերէն մին ունինք յանձին Ն. Վսեմութեան Պօղոս Նուպար փաշայի: Բայց նկատի ունենալով իր բազմազբազ դերը բարեգործականին մէջ և երկար ատենէ ի վեր Ձերդ Վեհափառութեան կողմէ յաջողապէս վարած պատուիրակութեան պատճառած յոգնութիւնը, մի գուցէ Ն. Վսեմութիւնը դժկամակի ստանձնել մի նոր գործ, որ արդարև պսակումը պիտի ըլլար Վեհափառ Տիրոջ և իր Վսեմ. պատուիրակին մինչև ցարդ կատարած ազգանուէր ջանքերուն: Եւ որովհետև մեր մօտ պանքի հիմնարկութեան հարցերու մէջ փորձառու մարդիկ շատ չկան, կարելի չէ՞ արդեօք այս հարցով շահագրգռել նաև պ. Ժամհարեանցն ալ, որ Պօղոս փաշայի հետ ձեռք ձեռքի տալով և ի պահանջել հարկին, գէթ սկիզբները՝ կովկասէն կամ Եւրոպայէն հրաւիրուելիք պանքի Տնօրէններու միջոցով գործեն Հայկական վեց նահանգներու և Կիլիկիոյ մէջ հաստատելի Ազգ. երկրագ. 7 պանքաներու մէջ:»

Մենք յայս ունինք, որ Ռուսաստանի հայերը՝ ոմանք

իրենց նիւթական միջոցներով և ումանք էլ իրենց բարոյա-
կան օգնութեամբ կիրադործեն այս խիստ ցանկալի գաղա-
փարը, Հայաստանում ունենալու մի Հայկական կենդո-
նական դրամատուն իւր բաժանմունքներով:

Բ. Վ. Ա.
— — —

ԱԿՏԻՍ ԲԱԼԱՅԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Թիֆլիսաբնակ Շուշեցի Աւետիս Բալայեանը, ստաշի
կարգի վաճառական, 1901 թ. դեկտեմբերի 19-ին Թիֆլիսի
նօտար Լ. Մզէբրեանցի մօտ կտակ է անում և որը մա-
հից յետոյ Թիֆլիսի Շրջանային Կատարանը հաստատում
է 1903 թ. մարտի 19-ին: Այդ կտակով Աւետիս Գուկա-
սեանը հետեւեալն է սնօրելում. Ա. Ս. Էջմիածնի Մայր
Աթոռին նշանակում է երեսուն հազար ուսուցիչ այն պայ-
մանով, որ այդ գումարը մնայ անձեռնամխելի, իսկ $\frac{0}{100}$ $\frac{0}{100}$
ներով բարձրագոյն ուսումն ստանան էջմիածնի Ճեմարանն
աւարտած հայ լուսաւորչական դաւակները, իսկ Ճեմարանի
փակման դէպքում, ուսումն ստանան հայ լուսաւորչական
դաւակներից նորա, որոնք ցանկանում են իրենց նուիրել
հոգևոր ծառայութեան Կովկասի, Տաճկաստանի և Պարս-
կաստանի սահմաններում, պայմանով որ այդ որդեգիր-
ները հոգևոր աստիճան ընդունելով՝ զնան արաստանման
սովորելու հայկական և աստուածաբանական գիտութիւն-
ներ: Որդեգիրներ պէտք է ընդունուեն այն անձինք, որոնք
պատկանում են հայ-լուսաւորչական դաւանութեան և
որոնք կրիստոսանան ծառայել հայոց եկեղեցուն և ժողովր-
դին: Իւր այս կարգադրութեան կատարումն յանձնում է
ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին Հոգևոր Ճեմա-
րանի վարչութեան հետ միասին, իսկ վերջինիս գոյու-
թիւն չունենալու դէպքում՝ միայն Վեհափառ Կաթողի-
կոսին:

Բ. Հայոց էջմիածնի Մայր Աթոռի վանքին նշանա-
կում է երեսուն հազար ուսուցիչ Այդ գումարը պէտք է